

Համաձայնեցված է
ՀՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐ
Կ. Ճշմարիտյան

04 մարտ 2003 թ.

04 մարտ 2003 թ. N 26-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՍՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐԱՆՔԻ, ՀԱՆՔԱՅԻՆ ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ, ՓԱՅՏԵ-ՔԻՄԻԱԿԱՆ
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ՊՂՆՁԻ ԵՎ ՊՂՆՁԻ ԽՏԱՆՅՈՒԹԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿ ԳՈՑԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՄՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՄՏԻ) ԶԱՓԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թ. ապրիլի 29-ի «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող գույքի փաստացի կորստի (բնական կորստի) չափերը սահմանելու կարգի մասին» N 272 որոշման համաձայն

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող քիմիական արտադրանքի, հանքային պարարտանյութերի, փայտե-քիմիական ապրանքների, պղնձի և պղնձի խտանյութի տեղափոխման և պահպանման ժամանակ գոյացող փաստացի կորստի (բնական կորստի) չափերը» (հավելվածը կցվում է):

2. Նախարարության ստանդարտացման, չափազիտության և համապատասխանության հավաստման վարչությանը տասնօրյա ժամկետում «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող քիմիական արտադրանքի, հանքային պարարտանյութերի, փայտե-քիմիական ապրանքների, պղնձի և պղնձի խտանյութի տեղափոխման և պահպանման ժամանակ գոյացող փաստացի կորստի (բնական կորստի) չափերը» ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն՝ համաձայնեցման և ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման, համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Ա. Մալխասյանին:

Չ Ա Փ Ե Ր

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՓԱՍՏԱՅԻ
(ԲՆԱԿԱՆ) ԿՈՐՄՏԻ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն նորմատիվ ակտը մշակված է հիմք ընդունելով «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածը և սահմանում է որոշ ապրանքների տեղափոխման և պահպանման ընթացքում առաջացող բնական կորուստների թույլատրելի սահմանային չափերը:

1. Քիմիական արտադրանքի պահպանման ժամանակ բնական կորստի չափեր

Արտադրանքի անվանումը	Բնական կորստի նորմի չափման միավորը	Բնական կորստի չափը
Սրջնաթթու	կգ/մ ³	0,23

2. Հանքային պարարտանյութերի պահպանման և ավտոտրանսպորտով տեղափոխելուց բնական կորստի չափեր

Պարարտանյութի անվանումը	Բնական կորստի չափերը (% ընդհանուր ապրանքի զանգվածից)
	ավտոմեքենայով տեղափոխելուց
սելիտրա ամոնիակի, կարբամիդ, ամոնի-նատրիի սուլֆատ	0,05
պրեցիպիտատ, կալիի սուլֆատ, ամոֆոս, դիամոնիֆոսֆատ, սուլպերֆոսֆատ հատիկավոր ապատիտի կոնցենտրատից առանց ավելացումի և մանրամասնիկի ավելացումով, սուլպերֆոսֆատ կրկնակի մանրամասնիկի, նիտրոֆոս	0,05
նիտրոֆոսկա, նիտրոամոֆոս	0,05
հանքային պարարտանյութ պինդ հատիկավոր-բոլոր տեսակի կարբամիդ	0,05
ամոնիի սուլֆատ, նիտրոֆոսկա	0,15
սուլպերֆոսֆատ հատիկավոր ապատիտի կոնցենտրատից առանց ավելացումի և մանրամասնիկի ավելացումով, սուլպերֆոսֆատ ամոնիզացված կրկնակի հատիկավոր, ամոֆոս, նիտրոֆոս, ազոֆոսկա, դիամոնիֆոսֆատ, դիամոնիֆոսկա	0,25
քլորիդի կալի, կալիի աղ, կալինիտ, կալի-մագնիի կոնցենտրատ, կալի-մագնեզիա	0,15
ֆոսֆորի ալյուր	0,25

3. Հանքային պարարտանյութերի երկաթուղով տեղափոխելուց բնական կորստի չափեր

Բեռների անվանումը տարիֆային նումենկլատուրայով	Բնական կորստի չափերը (%)
---	--------------------------

	ընդհանուր ապրանքի զանգվածից)
քիմիական և հանքային պարարտանյութ	0,09
ամոնիակի ջուր	0,07
միներալ պարարտանյութեր (ազոտի, կալիի) բացված տարայի մեջ, փակ վազոններում առանց տարաների և հատուկ վազոններում տեղափոխվող	0,33
միներալ պարարտանյութեր (ֆոսֆատի) բացված տարայի մեջ, փակ վազոններում առանց տարաների և հատուկ վազոններում տեղափոխվող	0,45

4. Փայտե-քիմիական ապրանքների մեկ տարուց ավելի պահպանման ժամանակ
բնական կորստի չափեր

Հումքի անվանումը	Պահման մեթոդը	Բնական կորստի չափերը (% ընդհանուր պահված ծավալի համեմատ ամեն ամիս պահելուց)
Սկիպիդար	ռեգերվուարներում	0.075
Պիխտայի յուղ	ռեգերվուարներում	0.075
Էֆիր բուտիլային քացախաթթու (բուտիլացետատ)	ցիստեռններում	0.065
Քացախաթթու փայտե- քիմիական սննդային	ցիստեռններում	0.015
Չյուր փայտե տերևային հանքատեսակ	մետաղական փակ տարողությունում	0.025
Ինգրիֆտոր փայտե- ձյութե	հորիզոնական ցիլինդրական ցիստեռնում	0.015
Ածուխ բնափայտի ռետորային	բաց տիպի բունկերներում 200 խոր. մետր տարողությունով	0.1

5. Բամբակյա շրտտի պահպանման ժամանակ բնական կորստի չափեր

Ապրանքի անվանումը	Պահման ժամկետը	Բնական կորստի չափերը (% ընդհանուր զանգվածից)
Բամբակյա շրտտ	մինչև 3 ամիս	0,29

6. Պղնձի և պղնձի խտանյութի տեղափոխման և պահմանման ժամանակ բնական
կորստի չափեր

Հումքի անվանումը և նորմի տեսակը	Բնական կորստի չափը (% առաքվող խտանյութի իմբաքանակից)
Պղնձի խտանյութ փոշիատիպ (85%-80%) բաց վիճակում առանց թաղանթային ծածկույթի	
Մեխանիկական բարձում ավտոմեքենաների մեջ և բեռնաթափում	0,6

Տեղափոխումը ավտոմեքենաներով	0,4
Բարձրում վագոնների մեջ և տեղափոխում երկաթգծով	0,6
Բեռնաթափում վագոններից և բարձրում ծովային տրանսպորտ	0,7
Բաց պահեստներում պահեստավորման ժամանակ	0,1-0,35